Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-514-17.02.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» 2019 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-141-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«7) Հայաստանի Հանրապետության անունից Եվրոպական դատարան է ներկայացնում միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ պահանջ:»:

Հոդված 2. Օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Կառավարության որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում հայցադիմում.»,

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1) Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում ժամանակային միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն.»:

Հոդված 3. Օրենքի 8.2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին, 6.1-ին եւ 8.1-ին կետերով՝

«1.1) սույն հոդվածի 1-ին կետով սահմանված բանակցությունների արդյունքում կազմում է հաշտության համաձայնագիր, որը հաստատում է Կառավարությունը՝ սահմանելով համաձայնագրի ստորագրման եւ դրանից բխող պարտավորությունների իրականացման կարգը.

6.1) միջազգային արբիտրաժային վեճերի կամ օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քննվող գործերի շրջանակներում բանակցված հաշտության համաձայնագիրը հաստատման է ներկայացնում

Կառավարություն, որը հաստատում է այն՝ սահմանելով համաձայնագրի ստորագրման եւ դրանից բխող պարտավորությունների իրականացման կարգը.

8.1) արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի առնչությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը, ինչպես նաեւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերն արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վարույթում.»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետով՝

«3.1) ներկայացնել միջազգային դատարաններ, Եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտ եւ միջազգային արբիտրաժային կենտրոններ գործուղվող իրավաբանների թեկնածությունը, որը հաստատվում է վարչապետի կողմից: Հանրային ծառայող չհանդիսացող անձին վարչապետը որոշմամբ լիազորում է հանդես գալ սույն կետում նշված մարմիններում, եւ նրա հետ կնքվում է համապատասխան պայմանագիր.»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լրամշակված նախագիծ

Կ-514-17.02.2023-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» 2019 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-141-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«7) Հայաստանի Հանրապետության անունից Եվրոպական դատարան է ներկայացնում միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ պահանջ:»:

Հոդված 2. Օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Կառավարության որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում հայցադիմում.»,

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1) Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում ~~ժամանակավոր~~ ժամանակային միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն.»:

Հոդված 3. Օրենքի 8.2-րդ հոդվածը~~ի 1-ին մասը~~ լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին, 6.1-ին եւ 8.1-ին կետերով՝

«1.1) սույն հոդվածի ~~1-ին մասի 1-ին~~ 1-ին կետով սահմանված բանակցությունների արդյունքում կազմում է հաշտության համաձայնագիր, որը հաստատում է Կառավարությունը՝ սահմանելով համաձայնագրի ստորագրման եւ դրանից բխող պարտավորությունների իրականացման կարգը.

6.1) միջազգային արբիտրաժային վեճերի կամ օտարերկրյա դատարաններում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քննվող գործերի շրջանակներում բանակցված հաշտության համաձայնագիրը հաստատման է ներկայացնում Կառավարություն, որը հաստատում է այն՝ սահմանելով համաձայնագրի ստորագրման եւ դրանից բխող պարտավորությունների իրականացման կարգը.

8.1) արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի առնչությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը, ինչպես նաեւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության շահերն արբիտրաժային որոշումը (վճիռը) չեղյալ ճանաչելու վարույթում.»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետով՝

«3.1) ներկայացնել միջազգային դատարաններ, Եվրոպական դատարանի վճիռների կատարման դեպարտամենտ եւ միջազգային արբիտրաժային կենտրոններ գործուղվող իրավաբանների թեկնածությունը, որը հաստատվում է ~~Վարչապետի~~ վարչապետի կողմից: Հանրային ծառայող չհանդիսացող անձին ~~Վարչապետը~~ վարչապետը որոշմամբ լիազորում է հանդես գալ սույն կետում նշված մարմիններում, եւ նրա հետ կնքվում է համապատասխան պայմանագիր.»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-514-17.02.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված, 2-րդ հոդվածի 2-րդ կետ,** 3-րդ հոդված և 4-րդ հոդված	1.Նախագծի 2-րդ հոդվածում «8.1» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «8.1-ին» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի «1.1», 3-րդ հոդվածի «8.2», «1.1», «6.1» և «8.1», 4-րդ հոդվածի «3.1» ձևակերպումներին: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է «Միջազգային իրավական հարցերով	Ընդունվել է, Նախագծի համապատասխան հոդվածներում կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			ներկայացուցչի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 1.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Արդարադատության միջազգային դատարան է ներկայացնում ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն»: Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության (պաշտոնական հայերեն թարգմանության) 41-րդ հոդվածում կիրառվում է «ժամանակային միջոց» եզրույթը, իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»: Առաջարկվում է Նախագծով կիրառվող եզրույթները համապատասխանեցնել Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրությամբ կիրառվող եզրույթին: 3. Նախագծի 3-րդ հոդվածով		

			սահմանված է. «Օրենքի 8.2 հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1, 6.1 և 8.1 կետերով»: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածում հղումը շտկելու նպատակով «հոդվածի 1-ին մասը» բառերը փոխարինել «հոդվածը» բառով: Ինչպես նև Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 8.2-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին կետում առկա «սույն հոդվածի 1-ին մասի» բառերը հանել: 4. Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 3.1-ին կետում առկա «Վարչապետ» բառերը փոխարինել «վարչապետ» բառերով՝ համապատասխան հոլովաձևրով՝ հաշվի առնելոբ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջմ առ, այն է, որ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ		

			բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:		